

## ՈՒՐՈՒԿՈՒԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ (ՍԿԻԶԲԷՆ ՄԻՆՉԵԻ 1950)

ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1905ին, Ուրուկուայ Հայկական Յեղասպանութիւնը պաշտօնապէս ճանչցող առաջին պետութիւնը դարձաւ Այս իրողութիւնը, գումարուելով վերջին Յճամեակին երկրի տարբեր ատեաններէ մերթ ընդ մերթ Հայ ժողովուրդին ի նպաստ լուռող ճաններուն, թերեւս պատճառ եղած է, որ տեղւոյն փոքր, յարաբերաբար լուսանցքային կեանք ապրող Համայնքը Սփիւռքի եւ Հայաստանի ուշադրութեան արժանանայ:

Սակայն, այդ ուշադրութիւնը հետազօտական Համապատասխան Հետազօրութեան վերածուած չէր մինչեւ վերջերս: Բացառելով Աշոտ Արծրունիի *Տարեցոց Հարաւային Ամերիկահայոցի* (Պուլնոս Այրէս, 1943) տուած պատմա-կազմակերպական այլապէս թանկագին ակնարկը, Հայերէն լեզուով այլ աղբիւր գոյութիւն չունի Ուրուկուայի Հայ Համայնքին մասին: Սպաներէն լեզուով, այս բացը գոցելու աշխատանքը ստանձնած են Հետազօտողներ Ալպերթօ Տիւրէնեան եւ Տանիէլ Գարամանուկեան, որոնք գրեթէ տանձամեակ մը առաջ Հրապարակ Հաննցին իրենց ուղեւորական գիտական ուսումնասիրութեան արդիւնքը՝ *Հայկական Գաղթականութիւնը Ուրուկուայի Մէջ* գիրքին Ա. Հատորը (Մոնթէվիտէօ, 1968)<sup>1</sup> Երկրորդ Հատորը պատրաստութեան ընթացքի մէջ կը գտնուի տակաւին:

Գործին տարողութիւնը պատկերացնելու Համար պէտք է նկատի ունենայ, որ ուրուկուաւայ տպագիր մամուլը շատ Համեստ կշիռ մը ունեցած է իր սկզբնաւորութենէն՝ 1937էն ի վեր, այնքան, որ մինչեւ վերջերս այնչափ էր մատենագէտներուն: 1935էն մինչեւ այսօր, Հայկական ռատիօ-ժամերը եղած են Ուրուկուայի Համայնքին կեանքը պատկերացնողը՝ դրական թէ՛ միտական դրսեւորումներով, քանի որ անոնք կատարած են օրաթերթի Համագօր դեր՝:

Հաշուի առնելով տպագիր ու անտիպ աղբիւրներ, ներկայ ուսումնասիրութիւնը կը փորձէ Հայաստ ընթերցողին ներկայացնել Համայնքի պատմութեան ու կազմակերպութեան Համառօտ պատկերը՝ սկիզբէն մինչեւ 1950: Լիակատար աշխատանքի մը յաւակնութիւնը չունինք՝ մանաւանդ որ պատմական իրադարձութիւններու ներքին ծալքերուն չենք մտած: Սակայն, փորձած ենք ընթերցողին Համար Հարաւային կողմն աշխարհի ծուարած այս փոքր Համայնքի սկզբնական շրջանի պատկեր մը

տալ, որ ըստ կարելոյն Հաւաստի ու յետագայ ուսումնասիրողին Համար պիտանի պատմական ատաղձ Հանդիսանայ:

#### ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԸ

Ուրուկուայ ժամանած առաջին Հայը Դեկտեմբեր 1728ին Քատիզէն մեկնած Նաւու մը տնտեսն էր: Երբ Նաւը կ'անցնէր Հասարակածէն, ինչպէս ընդունուած սովորութիւնն էր, մեծ տօնախմբութիւն մը տեղի ունեցած է: Այս հինաւուրց տօնախմբութիւնը կապուած էր աշխարհը կիսող գիծը անցնելու եւ զայն առաջին անգամ անցնողները ձմերտելու: Հետո Այդ ժամանակ, ճամբորդներն ու անձնակազմը զրամական փրկագին մը պէտք է վճարէին Վիճի նախագահին: Անպտոն աստուածութեան, այլապէս՝ պարանի մը կապուած, բարձրագոյն կայմէն Զուր կը նետուէին: Ծամբորդներէն Փրա Գայիթանո Գաթանէօ պատմած է, թէ նախագահը շիր Հաստատածէն աւելի բարձր տուգանքի մը դատապարտեց Նաւուն տնտեսը, որ շատ գէշ Հայ մըն էր, տաքէն շատ տառապող, որովհետեւ կուրծքը բաց ներկայացած էր, ինչ որ յարգանքի պակաս Համարեցին: Նաւը Մոնթէվիտէօ ժամանած է 9 Ապրիլ 1728ին, իսկ Պուենոս Այրէս՝ Ապրիլ 19ին: Տնտեսին անունն ու յետագայ ճակատագիրը անյայտ են:

Հարիւր տարի ետք՝ 18 Յուլիս 1830ին, Ուրուկուայ իր անկախութիւնը կը հռչակէր: Հայերու նոր հետքեր՝ արդէն անկախացած երկրին մէջ, պիտի գտնուէին: Տիւրէճեան եւ Գարամանուկեան պաշտօնական տոմարներէ ճշդած են, որ 12 Նոյեմբեր 1835ին, Մոնթէվիտէօ ապրող Փրանսացի Զեամեայ զինուոր մը՝ Յովհաննէս Աքսարեան (Juan Agustin Axarian), Պուենոս Այրէսէն վերադարձած էր: Իսկ 1850ին, Մարիա Պելինեան (Belingian) կամ Պելինտեան (Belindian) երեք կալուածներու տէր էր Մոնթէվիտէօյի մէջ:

ԺՔ. դարու կէսերէն սկսած էր Հայ պանդխտութեան շարժումը, հետեւանք՝ Օսմանեան կայսրութեան Հայկական գաւառներուն աղետայի կացութեան: 1870ականներու վերջը, Պարբերդի շրջանը ի մասնաւորի մեծ ցնցումներու պիտի ենթարկուէր, իսկ 1885-1889ին ղէպի ԱՄՆ գաղթելու միտումները այնպիսի տարողութիւն ստացան, որ պատկերաւոր ձեւով կարելի է խօսիլ Համերիկեան շերտութեան սաստկացումի մասին:

1866-1870ի շուրջ, Պրազիլ ժամանած էր Վանեցի Վարժապետը (այդպէս կոչուած՝ Հայերէնի մաքուր գործածութեան Համար), որուն ինքնութիւնը անյայտ է եւ որ 1884ին Ուրուկուայի Հետ սահմանակից Ռիօ Կրանտէ սօ Սուլ նահանգի Սանթա Գրուզ քաղաքին մէջ խանութ մը ունէր: Ամուսնացած էր պրազիլուհի մը հետ եւ չորս զաւակներ ունեցած: Նկատի ունենալով իր ապրած տեղը, Հնարաւոր է, որ ան Ուրուկուայէն անցած ըլլայ Պրազիլ:

Ըստ Ամուլի Գրմաթյանի, ժ.թ. դարու կէսերը Պրագիլի, Արժանթինի եւ Ուրուկուայի մէջ սեփական խանութով Հայ առեւտրականներ կային արդէն: Օտարի հետ ամուսնացած ըլլալով, անոնց մասին տեղեկութիւն մնացած չէ՝: Ըստ Երեւոյթի, պնդումը հիմնուած է Վանեցի Վարժապետաի (Պրագիլ) եւ Հաճի Պետրոսի ու իր ընկերներու (Ուրուկուայ) պարագաներուն վրայ, թէ եւ զիրենք ժ.թ. դարու կէսը փոխադրելու հիմք չկայ:

Արդարեւ, 1860-1870ի շուրջ, Մոնթէվիտէօ ժամանած էր նոյնպէս վանեցի Հաճի Պետրոսը, որ 1882ին Փաթակոնիա փողոցի վրայ փերեզակութեան ապրանքներու մթերանոց մը ունէր ուրիշ երկու Հայ ընկերներու հետ, որոնք հոն կը մնային, մինչ ինք Մարտէլէն ապրանք կը Հայթայթէր: 1880ականներուն, Հիւսիսային Ամերիկա դաղթիչ ուզող Հայեր իրեն հանդիպած են ու խորհուրդ ստացած՝ Մոնթէվիտէօ մեկնելու:

1882-1890ին, առևտուարն 20 հոգի (մեծաւ մասամբ՝ խարբերդցի), Մոնթէվիտէօ ապրելէ ետք, փերեզակութեամբ զբաղելով անցած են Ռիօ Կրանտէ աօ Սուլ. անոնց կարեւոր մէկ մասը տարիներու տքնանքէ ետք Սան Փաւլօ կայուն խանութ հաստատած են: 1888ին, ութ Հայեր ժամանած էին Մոնթէվիտէօ՝ ըստ ուրուկուայեան տոմարներու, որոնք սակայն Պրագիլ անցածներուն հետ կապ չունէին: Անոնք նշուած են որպէս յոյն, արար, ուսու կամ սուրիացի: Առաջին երկուքը՝ Վոյն Հայկատուր Հայածեանը եւ Էռուս Միքայէլ Մարտիրոսեանը, Յուլիսին Հասած էին Մարտէլէն, թերեւս՝ Հաճի Պետրոսի խորհուրդին անսայով: Վերջին չորսը, որոնք Էսուրիացիք եւ առեւտրական կ'էին, ու նոյն նաւով Հասած՝ Դեկտեմբերին, ըստ Երեւոյթի միասին եկած էին, բայց տոմարը չ'ըսեր, թէ նաւը ուրիշ՝ կու գար: Այս նորեկներուն յետագայ ճակատագրի մասին տեղեկութիւն չկայ:

Մարտէլլի Արմէնեան Մարտ 1889ին կը Հաղորդէր, թէ ուրուկուայեան մայրաքաղաքին մէջ 25 Հայեր կային, մեծաւ մասամբ՝ խարբերդցի, որոնք շրջուն մանրափառութեամբ կը զբաղէին: Ըստ անստորագիր թղթակցութեան, Էստոնք ամենեւին իրար հետ ընկերական սէր չունին, իրար հետ միասին դուրս կ'ելնեն առեւտրական գործով եւ յետոյ իրար հետ կ'ուսուլով կու գան. իրար դէմ խարդախութիւններ կ'անեն. եւ այստեղ չտեսայ երկու անձ որ ընկերական սուրբ զաղափար ունենան. ազգասիրական զգացում բնաւ չունին եւ արդ պատճառով մինչեւ արժմ ազգային նպատակով որեւէ միութիւն չկայ իրենց մէջ կազմուածն<sup>10</sup>:

Եւ սակայն, շատ շուտով բան մը փոխուած էր. Միմաբեան ստորագրող թղթակից մը, Ապրիլին, կը նշէր, թէ 1888էն Մուշէն, Վանէն, Խարբերդէն ու Կարինէն 30 Հայեր հաստատուած էին Մոնթէվիտէօ, որոնք լաւ ընդունուած էին արարներու կողմէ: 22 Փետրուարին, 15 հոգի Հաւաքուե-

ցան ֓աթակոնիա փողոցի թիւ Ծին մէջ եւ, մղուած պրն. Յ. Փ. ի Հայրենասիրական կոչերէն, որոշեցին Հիւր դնել Վչալիական Միութիւնը ընկերութեան, որուն անդամակցութեան սակը ամիսը մէկ Փրանք պիտի ըլլար. Առ արդ զանձապետ որոշուեցաւ մի պատուաւոր Հայ վաճառականն որ միանգամայն առաջին Հայ գաղթականն եղած է այստեղ<sup>31</sup>, Դժբախտաբար, թղթակիցը ո՛չ կազմակերպիչ անձին անունը կը յիշէ եւ ո՛չ ալ, մանաւանդ, առաջին գաղթականին ինքնութիւնը, որ թերեւս, Հաճի Պետրոսը կամ իր ընկերներէն մին եղած ըլլայ, եթէ անուշտ ժողովաւոր իրենց խանութն էր: Հայկական Միութեան յետագայ ճակատագիրի մասին առաջմ այլ տուեալներ չկան:

ԺԹ. դարու վերջին տասնամեակին, դէպի Հարաւային Ամերիկա գաղթը դանդաղորէն զարգացաւ, ինչ որ վերագրելի է բարձր ու Հարուստ կեանքի խոստմնալից շշուկներու:

1890ին Ուրուկուայ ժամանեց Հոն յայտնապէս կայք Հաստատած ու ստուգապէս շառաւիղ ձգած առաջին Հայը<sup>32</sup>. Մանուկ Ազարեան (1867-1954) ծնած էր Վանի Օրտաֆ գիւղը: Երիտասարդ տարիքին մեկնած ըլլալով իր ծննդավայրէն, ան Զուլփերիա եւ Գերմանիա ոսկերչութիւն, ժամագործութիւն եւ զինագործութիւն սորված էր: Մոնթէվիտէօ ժամանելով, 1890-1912ին ապրեցաւ դաւառի քաղաքներու մէջ, նախ Յրայ Պենթոս եւ ապա Տոլորէս՝ իր ասպարէզին խանութ բանալով: Տոլորէսի մէջ 1902ին ամուսնացաւ տեղացի կնոջ մը հետ, որմէ ունեցաւ երեք զաւակ: 1912ին ընտանեօք վերջնականօրէն Մոնթէվիտէօ տեղափոխուեցաւ՝ զաւակներու ուսումին ի խնդիր: Աւագը՝ Խուլիան Ալպերթօ, Ուրուկուայի առաջին Հայագգի զինուորականը եղաւ (դեր-գնդապետի աստիճանով), իսկ կրտսերը Մարիա Եսթեր, առաջին Հայագգի վկայեալ ուսուցչուհին, 1934ն<sup>33</sup>:

Թունիս 1890ին Հրապարակուած օրէնքի մը Չրդ յօդուածը կ'արգիլէր ախացիներու, փրիկեցիներու եւ գնչուներու Ուրուկուայ մուտքը<sup>34</sup>: Այս օրէնքին կողքին, Հոկտեմբեր 1902ի Հրովարտակը կ'ընդգծէր ուրուկուայցիները էստորին ցեղերու ազդեցութենէն պաշտպանելու անհրաժեշտութիւնը՝ Այսուհանդերձ, ասիկա արգելք չէր, որ 1910ին ծանօթ Հանրային գործիչ Քարլոս Մայէսօ պարծննար, թէ Վո՛չ մէկ տեսակի տարբերութ գոյութիւն ունի (...): Մեր աշխարհաքաղաքացիութիւնը սահմանները ջնջած է՝ ուրուկուայեան ընկերութիւն մը ստեղծելու Համար, ուր բոլոր ցեղերը կը միաձուլուին, միացած՝ նոյնատեսակ տենչերով<sup>35</sup>:

Սակայն, 18 Փետրուար 1915ին, կառավարութիւնը՝ 1890ի օրէնքը մեկնարանելով, զայն փոփոխութեան կ'ենթարկէր: Երբորդ յօդուածի վեցերորդ պարբերութիւնը կը Հաստատէր, թէ Վմերժելի գաղթ կը նկատուին [այն] ախացիներն ու փրիկեցիները որոնց մերժումը յարմար է՝ գաղ-

թականական իշխանութիւններու դատումովն<sup>27</sup>։ Ասիկա ապահովեց Հայերու անարդի մուտքը, քանի որ, թէև ստիպել, այլևս չմերժելիս ըլլալէ կը դադրէին, մանաւանդ որ որոշումը Հերթական պաշտօնեային տնօրէնումին կ'ենթարկուէր։

1880-1896ականներու Մոնթէվիտէոյի նաւահանգիստի տոմարները կորսուած են։ 1896-1899ին Յ Հոգի մտած է անկէ՝ տարբեր Հպատակութիւններով։ 1896ի ճամբորդները (Sakol Kaslian՝ գերմանացի, Nicolo Berguglian՝ աւստրո-հունգարացի, Charlis [sic] Turian՝ ֆրանսացի) կը թուին Հայ ըլլալ, ինչպէս ենթադրած են Տիւրքէնեան եւ Գարամանուկեան։ 1897ի պարագաները (Federico Eshlian՝ ֆրանսացի, Damion Comisian՝ յոյն) կասկածելի են ըստ անոնց, թէև Հայերէն մականուններ ալ առաջարկած են։ 1898ի երկու ճամբորդներ մտած են իրրեւ Վալի (Charles Sarkissian եւ Gabriel Balikian)։ կասկածելի է, որ միւս երկուքն ալ Հայ ըլլան (Miguel Maian՝ չեչուած ազգութիւն, եւ Julian Arsubian՝ սպանացի)<sup>28</sup>։

1900ին Ուրուկուայ ժամանած է խարբերողի Յովհաննէս Մըջիեկեանը<sup>29</sup>, որուն անունը տոմարին մէջ արձանագրուած չէ։

Հայերու ներհուքը զգալի փոփոխութիւններ պիտի չկրէր ի. դարու աւաջին երկու տասնամակններուն։ Արժանիքին կամ Ուրուկուայ մուտքի միակ դուր նաւահանգիստներու տոմարները չէին։ Ասիկա բացայայտ է Ուրուկուայի պարագային, ինչպէս կը Հետեւցուի ցանկերու եւ ուրիշ անուններու բաղդատութենէն։ 1901-1909ին, ըստ տոմարներու, Ուրուկուայ մտած էին 17 Հոգի Բայց Հաւաքական յիշողութիւնը 1914էն առաջ ժամանած տասնչորս անուններ պահպանած է, որոնցմէ ոմանք Համայնքի աւաջին տարիներուն Հանրային դեր ունեցած, եւ սակայն բացակայ են այլ տոմարներէն<sup>30</sup>։ Ոմանք, թերեւ, 1910էն առաջ ժամանած էին։

#### ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԵՐԸ

1910ականներուն, Հայերը պիտի չարունակէին ժամանել Ուրուկուայ, քանակական թեթեւ ան մը արձանագրելով։ Անուններէ ու թիւերէ զատ, ուրիշ ըստ յայտնի չէ իրենց մասին մինչեւ 1915։ Արդարեւ, 1911-1915ին ժամանողներու թիւը՝ ըստ տոմարներու, եղած է 76<sup>31</sup>։ Այս թիւը, անշուշտ, մօտաւոր է (եւ, ի Հարկէ, մեկնողները նկատի չունի), քանի որ, օրինակ, ըստ բանաւոր վկայութեան մը, 1912ին ժամանած էին տոմարի մէջ չարձանագրուած եօթ անձեր, որոնցմէ չորսը՝ Յարութիւն Չիլիեկիրեան, Յովհաննէս Աթէշեան, Նազարէթ Խուլմունեան եւ Արամ Ղուկասեան, յաջորդ տարիներուն գործօն դեր պիտի ունենային Համայնքի կեանքին մէջ<sup>32</sup>։

1915ին, ՀԲԸՄԻ Պուենոս Այրէսի մասնաճիւղը (հիմնուած՝ 1911ին) ի նպաստ Եղեռնի տարագրեալներուն կը սկսէր հանգանակութեան մը, որուն արձագանգները Մոնթեվիտէոյէն ալ կը լսուէին Այսպէս, Մալիսին կ'արձանագրուէր, թէ հանգանակութիւնը լաւ հունի մէջ էր հոն, եւ ապա, թէ ուրուկուայան 4 փետոյի նուիրատուութիւն մը ստացուած էր<sup>23</sup>։ Մալիս 28ին, Մոնթեվիտէոյի Լա Ռասոն օրաթերթը կը գրէր․-

«Այս առաւօտ մեզի այցելեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատուիրակութիւն մը, որ հոս ժամանած է իրենց ազգակիցներուն եւ արդ ժողովուրդին հետ համակրող անձերու միջեւ կոմիկասի գաղթականներուն օգնութեան տրամադրելի լուծանքը հաւաքելու համար»։

(...) Նուիրատուութիւնները տեղական Յանձնախումբին կրնան առաջուկ՝ փողոց Ինկլաթնուա 401 (Սերրո)»<sup>24</sup>։

Սակայն, լատիական Յանձնախումբին ակնարկութիւնը ՀԲԸՄԻ մասնաճիւղի մը մասին չէ թուիր ըլլալ, այլ՝ դրամահաւաքի համար գործող խումբի մը Թերեւս արդ խումբը կը գլխաւորէր Արամ Ղուկասեանը եւ լիւեալը իր հասցէն ըլլար՝ Յունիս 10ին գրուած նամակով, ՀԲԸՄԻ Պուենոս Այրէսի մասնաճիւղի վարչութիւնը կը հաղորդէր իրեն․-

«Գոհունակութեամբ ստացանք Ձեր Յունիս 8 թուական նամակը, որուն պարունակութիւնը շատ սրտապնդիչ ու քաջալերական էր»։

Ձեր փափաքին համաձայն ներփակ կը դրկենք սպաներէն նամակ մը ուղղուած Պր. Կարապետ Ուզունեանի եւ Բէնարոյի Ֆէրոքարիլ Սէնթրալի գործաւարներուն որոնք մասնակցած էին իրենց նուէրներով բացած հանգանակութեան որոնց համապատասխան ստացազիրը ներփակ կը դանէք»։

Անգամ մըն ալ պատիւ կը համարենք յայտնել մեր անկեղծ եւ խորին շնորհակալութիւնները Ձեր ջանքերուն համար դէպի այս Միութեան շուրջ, որ ամէն հայու հայրենասիրական զգացումներուն թարգմանն է եղած»<sup>25</sup>։

Սպաներէն Յունիս 10 թուակիր նամակէն կը պարզուի, որ Ուզունեանի ջանքերով, Փենիարոյի շոգեկառքի աշխատանոցի բանուորներու խումբ մը, որոնց շարքին՝ ու-հայեր, 8-90 ուրուկուայան փետոյի նուիրատուութիւն մը ըրած էին ի նպաստ տարագրեալներուն։ Ահա թէ ինչու նամակը սպաներէն լեզուով գրուած էր։

Սակայն, ուրիշ խմբակցութիւն մը կազմակերպական կառոյց մը ստեղծած էր։ Սեպտեմբեր 28ին, էջ Փրայթ օրաթերթը կը գրէր․-

«Ուշադիր նամակով մը, Միացեալ Նահանգներու դեսպանատունը պատասխանած է՝ "Հայ Բնակիչներու կեդրոն" ի բողոքագիր-խնդրագրին, որուն մասին այս սիւնակներէն լուր տուած էինք, հաղորդելով որ արդ

Վաւերացումը Գործնական է Ուսանողները՝ Արտաքին Գործոց նախարարութեան Ամերիկացի դեսպանին քաղաքափար վերաբերումը, գիտենք, լաւագոյն տգաւորութիւնը ձգած է Հայ բնակիչներուն վրայ, որոնք մեզմէ խնդրած են որ յիշեալ Կեդրոնին երախտագիտութիւնը հրապարակաւ յայտնուի»<sup>26</sup>,

Այս նորաստեղծ Կեդրոնը, Յարութիւն Զիլինկիրեանի գլխավորութեամբ, Հոկտեմբեր Ծին կապի մէջ մտաւ Պուենոս Այրէսի ՀԲԸՄի մասնահիւղին հետ, Հաղորդելով իր կազմութիւնը եւ խնդրելով պաշտօնական ճանաչումը որպէս Մոնթէվիտէոյի մասնահիւղ: Ան կը տեղեկացնէր նաեւ, որ Հանդանակութեան ձեւնարկած էր:–

«Տ. Յարութիւն Զիլինկիրեանէ նամակ ստացանք որ մեզի կը տեղեկացնէր թէ հող գտնուող Հայերու մէջ Գոմիսիոն մը կամ Ընկերութիւն մը կազմած է իր նախագահութեան տակ ի նպաստ Հայաստանի կարօտեալներուն Հանդանակութիւն մը ընելու, եւ նաեւ \$25.00 փետոյի մը չափ դրամ Հաւաքած ըլլալը մեզի կ'իմացնէ եւ կը խնդրէ որ Մասնաժողովս վաւերացնէ եւ արտօնագիր մը գրկէ: Միեւնոյն ատեն տեղւոյը ամենակարեւոր թերթին միջոցաւ պաշտօնական ծանուցումներ ընէ, թէ վերոյիշեալ Գոմիսիոնը արտօնեալ է Մասնաժողովիս կողմէ Միութեան անուան տակ Հանդանակութիւն մը ընելու: Իր նամակին պարունակութիւնը ասկեց ակնի բացատրութիւն մը եւ կամ այդ “Գոմիսիոնի” կամ “Ընկերութեան” կազմակերպութեան մասին ուրիշ կարեւոր մանրամասնութիւններ չէր տեղեկացուցած»<sup>27</sup>:

Հոկտեմբեր 17ին, ՀԲԸՄը Զիլինկիրեանին կը պատասխանէր, թէ ձեռնպահ կը մնար ճանաչումի հարցին մէջ, քանի որ ասիկա Կեդրոնական Վարչութեան վաւերացումին կը կարօտէր<sup>28</sup>: Մոնթէվիտէոյի նամակը, սակայն, Նոյեմբեր Ծի ժողովին քննարկումի դրուած էր, որ Հարմար չի դատեց խնդրուած “արտօնագրի” կամ վաւերագրի պատասխանատուութեան յանձնառու ըլլալ, եւ ապագայ անտեղիութիւններէ զերծ մնալու համար որոշեց պ. Յ. Զիլինկիրեանի նամակաւ իր ազգասիրական ձեռնարկը ջատագոփել եւ խնդրեց իրմէ որ եթէ Համաձայն կը գտնուի իր Հանդանակած դուժարը տեղւոյս նպաստի յանձնաժողովին խրկէ»<sup>29</sup>: Ինչպէս կը տեսնուի, վերին ատենի վաւերացումի մասին խօսք չկայ հոս:

Զիլինկիրեանի կազմակերպութեան մասին ուրիշ տեղեկութիւն չկայ: Հոկտեմբեր 7ին, Հա Քաստե օրաթերթը կը Հաղորդէր, թէ Լոնտոնի մէջ քաղաքապետի գլխավորութեամբ Նպաստեց Կոմիտէ մը ստեղծուած էր՝ տարագիրներուն օգնութեան հասնելու համար, եւ թէ նուիրատուութիւնները կարելի էր յղել Ուրուկուայի մօտ Մեծն Բրիտանիոյ դեսպանատան խողովակով<sup>30</sup>:

Հանգանակութիւնը կը շարունակուէր: 1918ի սկիզբը, 10 ուրուկուայ-  
եան փետոյի գումար մը կը Հասնէր Պուենոս Այրէսի ՀԲԸՄին<sup>21</sup>:

Ձիլինկիրեան նաև գործոն դեր ունեցաւ Հայկական Լեզնոյ կազմա-  
կերպութեան մէջ<sup>22</sup>: Արդարեւ, Պուենոս Այրէսէն 1919ին մեկնող 23 Հոգի-  
նոց երկրորդ խումբին մէջ Մոնթէվիտէոյէն 7 Հոգի կար: Խումբը կը գլը-  
խաւորէր Ծրուանդ Մայիսեան<sup>23</sup>: Թէև փափաքողներու թիւը աւելի մեծ  
եղած է, սակայն ըստ երևույթին նոր մեկնումներ արձանագրուած չեն:

Հայաստանի Հանրապետութեան Հռչակումը աշխուժութիւն բերաւ  
փոքրաթիւ Համայնքին, որ կազմակերպումի նոր փորձ մը կատարեց:  
Յունիս 1918ին, Հյ Տիա օրաթերթը կը տեղեկացնէր, թէ քաղաքի բոլոր  
Հայերու ներկայութեամբ տեղի ունեցած ժողովին ընտրուած էր յանձնա-  
խումբ մը որ գաղթականներուն ի նպաստ Հանգանակութեան պիտի ձեռ-  
նարկէր: Ատենապետը Յ. Ձիլինկիրեանն էր, ատենադպիրը՝ Գրիգոր Դեր-  
ձակեանը, իսկ պանծապալը՝ Յովհաննէս Աթէշեանը<sup>24</sup>:

Աթէշեան այս մասին տեղեկացուց Պուենոս Այրէսի ՀԲԸՄին: Վեր-  
ջինս, Սեպտեմբերին զրած նամակով, Հաքց կու տար, թէ նորակազմ  
յանձնախումբը կրնա՞ր վերածուիլ Բարեգործականի մասնաճիւղի մը<sup>25</sup>:  
Անոր ատենապետը Նոյն Յարութիւն Ձիլինկիրեանն էր, որուն կազմակեր-  
պութեան ՀԲԸՄի մասնաճիւղի վերածումը 1915ին մերժուած էր: Նամակը  
յղուած էր Ղուկասեանին (որ ՀԲԸՄի անդամ էր), Ձիլինկիրեանին, Աթէ-  
շեանին եւ Դերձակեանին: Այս անգամ, մերժումը Մոնթէվիտէոյէն եկաւ:

«Մոնթէվիտէօ Վարչութեանս կողմանէ զրկուած նամակին պատաս-  
խանք ստացանք: կը գրեն թէ “Հայկական Կեդրոն” անուն ընկերութիւն  
մը կազմուած եւ տեղական լրագրերու մէջ յայտարարուած: սակայն  
ընդհ. ժողովոյ մէջ որոշած են ի նպաստ Բարեգործականի Հանդէս մը  
սարքել եւ Հասոյթը յատկացնել սոյն նպատակին: ուստի առ այս իրենց  
չնորՀաւորական նամակ մը պիտի գրուի ընկերութեան կազմութեան եւ  
չնորՀակալութիւն պիտի յայտնուի իրենց տուած Հանդէսի որոշումին Հա-  
մար»<sup>26</sup>:

Այս Կեդրոնի մասին մեծ բան յայտնի չէ: 1920ին, մեծ խանդավառու-  
թեամբ տօնուեցաւ Հայաստանի անկախութեան երկրորդ տարեդարձը եւ  
Հանգանակուեցաւ գումար մը ի նպաստ Հայաստանի բանակին: Ձեռնար-  
կին խօսք առած էին Ղուկասեան, Աթէշեան եւ Նազարէթ Խումուճեան<sup>27</sup>:  
Կազմակերպիչը, Հաւանարար, Հայկական Կեդրոնն էր:

Սակայն, անկախութիւնը ճանջուած չէր Ուրուկուայի կողմէ, ինչ որ  
կը ստիպէ թիւրիմացութիւն մը ճշդելու: Ըստ Արծրունիի, Յունուար  
1920ի Դաշնակիցներու փաստական ճանաչումէն ետք, «36 պետութիւններ  
Հաղորդեցին Հայաստանի անկախութեան պաշտօնական ճանաչումը, ու-  
րոնց շարքին՝ Արժանթին, Ուրուկուայ եւ Փերու»<sup>28</sup>: Այս պնդումին աղ-

րիւրը տրուած չէ: Միւս կողմէ, Խուլմունեանը իրրեւ թէ «1918ին ներկայացուցիչն էր Հայաստանի Հանրապետութեան՝ Ուրուկուայի մէջ»<sup>40</sup>. այս մասին միայն դիտենք, որ ան Նոյեմբեր 1920ին որպէս հիւպատոս առաջարկուած էր Հանրապետութեան Հարաւային Ամերիկայի պետութիւններու մօտ ներկայացուցիչին՝ Էթիէն Պրազիլի կողմէ՝<sup>41</sup>.

Այս բոլորի դիմաց կարելի է վճռական համարել Ռիչըրտ Յովհաննէսեանի տեղեկութիւնը - է- Պրազիլի զեկուցներուն վրայ հիմնուած - թէ միայն Արժանթինը, Պրազիլը եւ Ջիլէն անկախութիւնը ճանչցած են՝<sup>42</sup>, եւ թէ, ըստ երեւոյթին, կարգը պիտի դար Փերուին եւ Փարակուային՝<sup>43</sup>. Ուրուկուայի պաշտօնական արխիւներուն թէ տեղեկատուին մէջ ճանաչումը որեւէ փաստ չկայ՝<sup>44</sup>.

Էթիէն Պրազիլը՝ Ուրուկուայի ճանաչումը ապահովելու աշխատանքին կողքին, որ Հայաստանի խորհրդայնացումին պատճառով յաջողութեամբ չպակուեցաւ՝<sup>45</sup>, պէտք է կապ հաստատած ըլլայ Համայնքին հետ: Արդարեւ, 8 Յունիս 1920ին, ան Պեւեռոս Արէսի Միջ-Կուսակցական Մարմինն հրահանգած էր.- «Հաղորդակցութեան մէջ մտէք Մոնթէվիտէոյի Հայրենակիցներուն հետ եւ անոնց Հասցէները դրկեցէք ինձ»<sup>46</sup>: Այս մասին ուրիշ բան յայտնի չէ: Այս շրջանին, Հարաւային Ամերիկայի Համայնքները Հանդանակութեան ձեռնարկած էին Հայաստանի ի նպաստ Պրազիլի Համաձայն, միայն մէկական հոգի Ջիլէն եւ Ուրուկուայէն մերժած էին մասնակցիլ՝<sup>47</sup>.

Կեդրոնի մասին այլ տեղեկութիւններ չկան, բացի անկէ, որ 1924ին գործօն կը նկատուէր, Ջիլիկերեանի ատենապետութեամբ՝<sup>48</sup>:

#### ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՈՒՓԵՂ ՀՈՍԱՆՔ ՄԸ

Այս թուականին, սակայն, արդէն ուրիշ միութիւն մը գոյութիւն ունէր: Արդարեւ, 1943ին Արծրունի կը գրէր.- «Մոնթէվիտէոյի զաղութի ազգային կեանքը քօան տարրուայ պատմութիւն ունի: 1923 հոկտեմբերին, 35 անձեր քով քովի գալով, հիմը կը դնեն Գաղութային Միութեան եւ կ'ընտրեն Հինգ Հոգինոց Հետեւեալ վարչական կազմը՝ Կարապետ Զատիկեան (ատենապետ), Արամ Ղուկասեան (ատենադպիր), Յովհաննէս Աթէշեան (գանձապահ) եւ Մերուն Գոյթուկեան, Երուանդ Քարամանեան (խորհրդականներ)»<sup>49</sup>: Զատիկեանի ատենապետութիւնը երկու տարի տևեց՝ 1923-1926<sup>50</sup>:

Գարակիլորին, Հարաւային Ամերիկայի երկիրները զաղթականութիւնը քաջալերելու գործունէութեան ձեռնարկած էին: Տնտեսական բարգաւաճումին նպաստող աշխատութի պակասը կար. հետեւաբար, դիւանագիտական ներկայացուցիչները լիազօրուած էին այս ուղղութեամբ ան-

հրաժեշտ աշխատանքը տանելու Եւրոպայի եւ Միջին Արեւելքի մէջ: Ճիշդ է, որ ընդհանրապէս կը խրախուսուէր եւրոպական գաղթականութիւնը, մինչ որոշ խարականութիւն կը կիրարկուէր՝ այլ ծագումով գաղթականներու մուտքը կանխելու համար, եւ Ուրուկուայի պարագան այ տարրերը չէր, սակայն, ինչպէս տեսանք, հայերու մուտքը գրեթէ անարգել տեղի ունեցաւ՝ օրինական սկզբնական դժուարութիւններէ ետք:

Գաղութային Միութիւնը ծնած էր որպէս հետեւանք գաղթի նոր հոսանքին: 1916-1922ին, գաղթողներու թիւը շարունակած էր չնչին ըլլալ (63 հոգի): Բայց 1923-1931ին հոսքը դարձաւ յորձանք՝ 6.771 նորեկներով, ինչ որ 1888-1900 թուականներու բարձրագոյն ցուցանիշը պիտի ըլլար (78,06%): Այս ութամեակին զանազան ազգերէ մօտ 180.000 գաղթականներ ժամանած էին Ուրուկուայ: Այդ զանգուածին 2 առ հարիւրէն քիչ մը անչին հայերէ բաղկացած էր՝ Անշուշտ, այս տուեալներէն պէտք է զեղչել եւս դարձողներու եւ Պուենոս Այրէս անցնողներու որոշ թիւ մը: Այս թիւին մօտաւոր պատկերը կարելի է կազմել բաղդատելով 1923-1931 գաղթականներու թիւը 1931ին կատարուած համայնքային մարդահամարին, որ շուրջ 4.000 հոգիի արդիւնք մը տուած էր<sup>50</sup>: Եթէ լիւնայ ութամեակի նորեկները գումարենք նախորդ 200ի մօտ գաղթականներուն եւ այդ տարիներուն տեղւոյն վրայ ծնածներուն, կ'ունենանք շուրջ 5.000 հոգիի թիւ մը, ինչ որ մտածել կու տայ, որ գաղթականներուն շուրջ 20 առ հարիւրը երկրէն մեկնած է:

1925ին գոյութիւն ունեցած է զանգուածային գաղթի մը ծրագիրը, ըստ յունահայ Նօր Օր թերթի տեղեկագրութեան.-

«Հաւաստի աղբիւրէ կը տեղեկանանք թէ “Համպուրկ-Սիւս-Ամերիքանիա” ընկերութեան Ուրուկուայի կառավարութեան մօտ կատարած դիմումներէն յետոյ, 10.000 երկրագործ եւ 2.000 արհեստաւոր հայ գաղթականներ խմբովին պիտի ընդունուին Ուրուկուայի»:

Յունական կառավարութիւնը “Համպուրկ-Սիւս-Ամերիքանիա” ընկերութեան խոստացած է մեկնումի դիւրութիւններ ընծայել ճամբորդ գաղթականներուն:

Ուրուկուայի կառավարութեան եւ ընկերութեան միջեւ գոյացած համաձայնութեամբ, գաղթականները պիտի հաստատուին խմբովին Անոնց պիտի տրուի հող, մեքենաներ, եւն., փոխարժէքը պիտի վճարուի մասնաւոր դիւրութիւններով, քանի մը տարուայ ընթացքին<sup>51</sup>:

Սակայն, այս ծրագիրը չիրագործուեցաւ: Նորեկ ալիքու գրեթէ 38 առ հարիւրը բանուոր էր, իսկ 20 առ հարիւրը՝ հողագործ<sup>52</sup>: Սակայն, ինչպէս Արժանթինի պարագային, Ուրուկուայի հողատիրական կառույցը չէր խրախուսեր ազատ, մանր երկրագործները, հետեւաբար՝ գաղթականներու Զիւնիսիսի մեծամասնութիւնը, որ այլապէս աշխատանքի դրամագ-

յուր ալ չունէր, հաստատուեցաւ Մոնթէվիտէօ: «Դաշտ չգացինք որովհետեւ մեզի ուղղութիւն չարուեցաւ: Հայերս մշակներ էինք, հողագործներ: Եթէ կառավարութիւնը հող եւ գործիք տուած ըլլար մեզի...», վկայած է հին սերունդէն ներկայացուցիչ մը<sup>51</sup>:

Դեռ 1928ին խօսակցութիւններ կալին արտասահմանի մէջ, թէ ուսուցիչները ընդարձակ ու բարեբեր հողեր յանձնած էր անոնց: Հայաստանի Գոյնափն ուղղուած նամակով, Ի. (Յ.՝) Ահարոնեան կը գրէր. «Երկրագործութեամբ պարապող հայ չի կայ գրեթէ եւ կառավարութիւնը ցարդ սեւէ հող տրամադրած չէ, հայերու կողմէ ալ այս ուղղութեամբ ոչ դիմում եղած է եւ ոչ ալ առաջարկ ներկայացուած է: Հայ բանուորներ իրենց յոյսը դրած են մէկ քանի միսի գործարաններուն վրայ, որոնք այս սարի լու չեն աշխատիր, այնպէս որ բանուորներ հոս հոն կը թափառին գործի համար եւ թշուառ են»<sup>52</sup>:

Երբեմն, թէ՛ ԱՄՆ եւ թէ՛ Արժանթին մուտքը պիտի դժուարանար, եւ Ուրուկուալը պիտի մնար որպէս վերջին կարելիութիւն: «Ենչուակ (trachoma) ունէի եւ արդ՝ ժամանակ ամերիկեան Հիւպատոսարանը վիզա չէր տար մեզի, ոչ ալ արժանթինեանը: Ուրուկուայեան Հիւպատոսարանը դացի եւ հոն խնդիր չունեցաք»<sup>53</sup>:

Այս դժուարութիւնները նաեւ փաստաթղթային էին: Այսպէս, Մայիս 1928ին, Պուենոս Այրէսի Հայ Գաղութային Կեդրոնի մէկ նիստին, քարտուղար կարապետ Քելչեանը ի շարք ալլոց կը ղեկուցէր՝

«Թէ՛ Մարտ 1էն սկսելով Արիանթինի կառավարութիւնը Պատրիարքարաններու տուած անցագիրները ընդունելի դադրած ըլլալուն պատճառաւ քանի մը ընտանիքներ Պ. Այրէս ելլելով չի թոյլատրուելով Մոնթէվիդէօ կը մնան եղեր: Որոշուեցաւ հոն դառնուող Federico Hughes անուն Անդրիացիին նամակ մը գրելով վրիշալ ընտանիքներուն համար իր օժանդակութիւնը հասցնել: Յիշեալ անձը ուրիշ առթիւ հայերու օգնած եւ նամակով մը յայտնած ըլլալով թէ ապագային ալ օգնելու պատրաստակամութիւն ունի, եւ ի հարկին հոն հայկ. Հիւպատոսի ներկայացուցիչի պաշտօնը ստանձնելու պատրաստ է, հարկ տեսնուեցաւ իրեն շնորհակալութիւն յայտնել»<sup>54</sup>:

Դժուարութիւնները յետագային պիտի շարունակուէին: Նոյն Հիւլը (վրիշալ որպէս «հայասեր անգլիացի»), 1928ին նամակ մը գրած էր Գաւիթի առաջնորդարանին, նշելով Հարաւային Ամերիկա մեկնող ճամբորդներուն դժուարութիւնները եւ թելադրելով, որ անցնելիք երկիրներէն անցազիր առնէին: Ան օրինակ կը բերէր Եգիպտոսէն Չիլէ մեկնած հայու մը պարագան, որ արժանթինեան անցազիր չունենալուն պատճառով, երկարատեւ մնացած էր Մոնթէվիտէօ<sup>55</sup>:

Ըստ ուրիշ աղբյուրի, 1928ին ծնունդ առած է այլ Համայնքային կազմակերպություն մը (կեդրոնատեղին՝ Քարլոս Մարիա Ռամիրէս 873), որուն ատենապետը Օնենիկ Գալեմբէրեանն էր, ատենադպիրը՝ Վարդիվառ Տէր Պօղոսեան, իսկ խորհրդականները՝ Յովսէփ Քէսեան, Կարապետ Արմէնեան, Մարդիս Միլեան, Ն. Պաշտուրեան եւ Նազարէթ Խուլմունեան: Յետագային, Ստեփան Քեքիլեան, Յովհաննէս Աթէշեան եւ Ոստանիկ Կոստանեան՝ վարչութեան անդամներէն երեքը փոխարինած էին<sup>60</sup>:

Այս կազմակերպութիւնն ալ երկար չէ տևած, քանի որ 1929ի սկիզբը Գրիգոր Վարդեան կը դրէր, թէ Համայնքը ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց եւ ոչ ալ Ազգային Միութիւն ունէր, եւ թէ երեք տարիէ ի վեր ջանքեր կը թափուէին այդ ուղղութեամբ: ՀԹԴ կոմիտէն, նկատի ունենալով ոչ-դաշնակցական տարրերու չմտնելը, պաշտօնապէս հրաժարած էր մասնակցելէ: Այդպէս կազմուած էր 9 Հոգինոց վարչութիւն մը, որ սակայն դործան էր<sup>61</sup>:

Հայկական իրականութեան մէջ Ուրուկուայի մասին քիչ բան յայտնի էր: Հարաւամերիկեան երկու Հակներուն՝ Արժանթինի ու Պրագիլի միջեւ կնկուած երկիրը լայն քարոզչութեան միջոցներ չունէր: Տիրէնեանի եւ Գարամանուկեանի Հաւաքած բանաւոր վկայութիւնները արժէքաւոր փաստաթուղթ մը կը ներկայացնեն.-

- «Զարմիկս 1923ին եկած էր. նամակ մը դրեց՝ “Հոս եկ’ուր, որովհետեւ լաւ գործ կայ”»:

- «Ես կը մըլեմ, երբ Երուսաղէմ էի, թէ Հօրեղբայրս իննի ցոյց տուաւ թերթի մը ծանուցումը ուր կ’ըսուէր, թէ Ամերիկայի մէջ երկիր մը կար’ Ուրուկուայը, որ գաղթականներ կ’ընդունէր, ուր ցեղային հարցեր կամ կրօնական հալածանք չկային եւ որ շատ զեղեցիկ կլիմայ մը ունէր»:

- «1928ին բոլոր հայերը կ’ըսէին, թէ Ամերիկա կու գան: Ուրուկուայը ծանօթ չէր»:

- «Զորս ու կէս տարի բանտ մնալէ ետք, թուրքերը զիս նաւ մը դրին եւ փոխեցին: Մարսէյի նաւահանգիստը իմացայ, որ Մոնթէվիտէօ կու գայի: Ես ոչ իսկ գիտէի, որ Ուրուկուայը գոյութիւն ունէր»:

- «Գործակալ մը Ուրուկուայի տոմսակա կտրեց: Ես գիտէի, որ Ամերիկա կը գտնուէր: Քանի մը բարեկամներ Մոնթէվիտէոյի հայու մը հասցէն տուին»:

- «Մեզի կ’ըսէին, թէ Պունտո Ալթէսի մօտերը տեղ մը կար, ուր գործ կը գտնուէր: (...) Ուրուկուայ՝ պզտիկ, հանգիստ երկիր, լաւ կլիմայ: Արժանթին՝ շատ խոնաւ, Պրագիլ՝ շատ տաք»<sup>62</sup>:

• Քառորդ դարու ընթացքին, Հայոց թիւը պիտի եռապատկուէր՝ 2.500 (1928), 3.000 (1932), 4.500 (1936), 5.000 (1944), 6.000-7.000 (1947)<sup>63</sup>:

**ՀԱՄԱՅՆՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Յարանուանութիւններ*

1928ի վերջերը Մոնթէվիտէօ ժամանեց Ներսէս վրդ. Տոլապճեանը, որ մօտ 40 տարի Հոգեւոր Հովիւր պիտի ըլլար նոյն Համայնքին: Յունուար 1929ին, առաջին պատարագը մատուցուեցաւ Ձիլէ փողոցի տան մը մէջ (Նորթէամբրիքս եւ Ֆրանսա փողոցներուն միջեւ), Սերբո թաղամաս<sup>65</sup>:

1930ին չէնք մը գնուեցաւ նոյն թաղամասին մէջ (Ձիլէ 233), եւ վերածուեցաւ եկեղեցի: Գոնէ մինչեւ 1931, Ներսէս վրդ. առժամեայ Հովիւ կը նկատուէր, քանի որ Մալխին, Գաղութային Միութիւնը քահանայի փնտառութի դիմած էր<sup>66</sup>:

9 Յուլիս 1930ին, վարչութիւնը պաշտօնապէս ճանչցուեցաւ կառավարութեան կողմէ՝ Հայ Գաղութային Ընդհանուր Միութիւն անունով եւ 100 անդամներով<sup>67</sup>: Կը թուի թէ այս վաւերացումը պատահական չէր, այլ նպատակ ունէր օտար զաղթականներու մասնակցութիւնը խրախուսել երկրի Սահմանադրութեան երդման 100ամեակի տօնին: Յուլիս 18ի յրեւիական ձեռնարկի նախօրեակին, էջ Տիարթօ օրաթերթը կը հրատարակէր Միութեան կողմէ՝ անոր մասնակցելու: Երկու-երեք հարիւր հայեր մասնակցեցան, իսկ Օգոստոս 14ին Միութեան ներկայացուցիչներ Ռ. Կոստանեան, Օ. Գալիմբէրեան, Վ. Տէր Պօղոսեան եւ Յ. Աթէշեան յուշատարակ մը կը յանձնէին Հարիւրամեակի Ազգային Յանձնաժողովին<sup>68</sup>:

Միութիւնը հրաւէր յղած էր Պուլեոս Ալրէսի Գաղութային Կեդրոնին, որուն տոմարներուն մէջ արձանագրուած է հետեւեալը-

«(...) 2.- Մօնթէվիտէօ Հայոց Հոգեւոր Հովիւ Տ. Ներսէս վրդ. Տօլապճեանի 12 Յուլիսի նամակը, որով կը փոփաքէր որ վարչութիւնս ալ իր մասնակցութիւնը ունենայ ի մէջ այլոց Ուրուկուայի ազատութեան Հարիւրամեակին առթիւ, ինչ որ պիտի ընէ տեղւոյն Հայ Գաղթ. Միութիւնը: Վարչութիւնս որոշած է պատասխանել որ չի կրնար իր մասնակցութիւնը տանիլ ոնէ՛ ձեռով, քանի որ պաշտօնապէս ճանչցուած չէ տեղիս կառավարութենէն, եւ թէ մինչեւ ցարդ ոնէ՛ տեղի: Հանդիսաւորութեանց մասնակցած չէ՝ կրնայ ըլլալ որ Ուրուկուայինին մասնակցելով տեղի- իշխանութեան ցաւ պատճառէն»<sup>69</sup>:

1931ին, Հայ Գաղութային Միութիւնը մարդահամար մը կատարեց, որուն Համաձայն Մոնթէվիտէոյի մէջ 989 ընտանիք (3.743 հոգի) կ'ապրէր, եւ քաղաքէն դուրս բնակչութիւնը կը գնահատուէր 60 ընտանիքի շուրջ (260 հոգի): Մոնթէվիտէօ ապրողներէն 969 ընտանիք 1923-1930ին ժամանած էր<sup>70</sup>:

1930-1938ին, ատենապետ էր Յովհաննէս Ահարոնեանը (զաշնակցական)<sup>71</sup>: Մալխ 1935ին, Վարչական Խորհուրդի եւ Տօլապճեանի միջեւ վէճ մը ծագեցաւ, որուն մանրամասնութիւնները յայտնի չեն: Գաղութային

Միութեան 17 Յունիս 1985ի յայտարարութիւնը կը շնորհէր, թէ «Տ. Ներսէս վրդ. Տոյազնեան Հոգեւոր պաշտօնը կատարելէ հրաժարած է, եւ եկեղեցին իր փակ մնացած է 4 շաբաթներէ ի վեր»<sup>71</sup>։

Վարդապետին մարտչի հայրենակիցները եկեղեցիի նոր շէնք մը կառուցեցին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ անունով<sup>72</sup>, Ակրասիատա եւ Թափէս փողոցներու խաչմերուկին վրայ։ Այսպէս, 1985-1988ին համայնքը ունեցաւ եկեղեցական երկու վարչութիւն եւ երկու շէնք։ Այս կացութեան դէմ յանդիման, Գաղութային Միութիւնը 1985ին ստիպուեցաւ հրաւիրել նոր քահանայ մը՝ Տ. Դիոնիս քհնյ. Տրէզեան։

Տազնապը իր աւարտին հասաւ 1988ին, Հարաւային Ամերիկայի Հայրապետական Պատուիրակ Գարեգին արք. Պաշատուրեանի Մոնթէվիտէօ այցելութեամբ։ Մարտչիները համաձայն եղան իրենց եկեղեցին գոցելու, իսկ Ներսէս վրդ. Տոյազնեանը ենթարկուեցաւ Գաղութային Միութեան յարողած Ուրուկուաւայ Թեմի Կեդրոնական Վարչական Խորհուրդին<sup>73</sup>, որուն 1989-1944ի ատենապետն էր Գրիգոր Պերկամային (չէզոք)՝ Պուենոս Այրէսի Հոգաբարձութեան ատենապետ Արմէն Պերկամայիի նորայրը, որ նոյն պաշտօնը կրկին պիտի ստանձնէր 1960-1964ին<sup>74</sup>, 1944ին, ատենապետութիւնը ստանձնեց Լեոն Թերզեանը, դաշնակցական (1944-1960 եւ 1964-1968)<sup>75</sup>, 1943ին, Կեդրոնական Վարչական Խորհուրդը 600 անդամ ունէր<sup>76</sup>։

1940-41ին, Բոմբերիօ եւ Ասիլօ փողոցներու խաչմերուկին վրայ (Ունիտն թաղամաս) ուրիշ եկեղեցի մը գոյութիւն ունէր, որ - կ'ենթադրենք - Դիոնիս Ա. քհնյ. Տրէզեանի (մահացած՝ 1942ին) ծուխը դարձած էր տաղնապի աւարտէն ետք։ 1942ին, Սերբոյի եկեղեցին փոխադրուեցաւ Ակրասիատա 2842ի շէնքը, որ դարձաւ Ս. Ներսէս Ենորհայի մատուռը, եւ ուր 5 Սեպտեմբեր 1966ին պիտի օծուէր այժմու Ս. Ներսէս Ենորհայի եկեղեցին<sup>77</sup>։

28 Փետրուար 1928ին<sup>78</sup>, Մոնթէվիտէօ կը ժամանէր վիեննական Միութարեան Սերուրէ վրդ. Քելէնեան՝ իր ազգականներուն այցելութեան, եւ հոն կը մտար մինչեւ իր մահը՝ 1945։ Ան պիտի դառնար համայնքի սակաւաթիւ կաթողիկէ հաստացեալներու Հոգեւոր Հովիւը, թէեւ իր գործունէութիւնը շօշափելի հետք պիտի չձգէր<sup>79</sup>։ 1948ին Մոնթէվիտէօ պիտի առաջուէր Գերպ. Յարութիւն Մ. վրդ. Թեքէեան՝ Զմմատու վանքէն, որպէս Հոգեւոր Հովիւ, իսկ 1980-1981ին՝ Լատին Ամերիկայի Հայ կաթողիկէներու Առաջելական Աջցելու։

1924ին կազմակերպուեցաւ Ուրուկուայի առաջին Աետորանական եկեղեցին։ Սկիզբը Զաքարիա Կարապետեան եւ Յարութիւն Աւարոնեան կը քարոզէին։ Իսկ 1928ին, Պուենոս Այրէսէն պատուելի Նազարէթ Սալլպեան Հիմնեց Օղբարութեան Եկեղեցին<sup>80</sup>։ 1936ին, սակայն, Հայ Աւետարա-

նական Եկեղեցին առանց քարոզչի մնաց եւ անդամները ցիրուցան եղան<sup>65</sup>։ Աւելի ուշ, սակայն, վերջինս կրկին վերականգնուեցաւ։

1931ին, կաթողիկէ եւ աւետարանական հաւատացեալներու թիւը 200ի շուրջ կը գնահատուէր։ 1943ի տուեալներով, գոյութիւն ունէին 60 աւետարանական եւ 50 եղբայրական ընտանիքներ<sup>66</sup>։

#### Դպրոցներ

Առաջին դպրոցը՝ Մեսրոպեանը, հիմնուեցաւ 1928ին կամ 1929ին<sup>67</sup>։ 1936ին հետեւեալ դպրոցները կային՝ Մեսրոպեան (110 աշակերտ), Մամիկոնեան (120, հիմնուած՝ 1931ին), Ստեփաննոսեան (50, հիմնուած՝ 1935ին), Մահակեան (95) եւ Հայկազեան (հիմնուած՝ 1932ին)<sup>68</sup>։ Արգարեանը փակուած էր 1936էն առաջ<sup>69</sup>։

1942ին կը գոյուէր Մահակեան վարժարանը։ Չորս դպրոցներ կեդրոնական վարչական Խորհուրդին հակակշռին տակ էին՝ Մամիկոնեան (149 աշակերտ), Մեսրոպեան (50), Հայկազեան (65) եւ Խրիմեան (65)։ Ներսէսեանը (70 աշակերտ) կը գործէր Հայ Ազգային կեդրոնի, իսկ Ստեփաննոսեանը (40)՝ Ազնիւրի Հայրենակցական Միութեան ղեկավարութեամբ<sup>70</sup>։

Այնուհետեւ շարունակական անկում տեղի ունեցաւ։ 1949ին գոյութիւն ունէին Մեսրոպեան, Մամիկոնեան, Հայկազեան, Խրիմեան (ընդամէնը 180 աշակերտ) եւ Ներսէսեան վարժարանները (80-70 աշակերտ)<sup>71</sup>։ 425ի սեղ (1936), 1954ին աշակերտութեան թիւը իջած էր 119ի, հակառակ համայնքի թուական աճին (4.500՝ 1936ին, 7.000՝ 1954ին)։ Այն ատեն չորս դպրոցներ կային (Ներսէսեան՝ 42 աշակերտ, Մեսրոպեան՝ 25, Հայկազեան՝ 26, Էրոտշ խմբակցութեանը մը՝ 26)<sup>72</sup>։

Այս դպրոցները երկսեռ նախակրթարաններ էին, ուր աշակերտները Հայերէնի տարրական ծանօթութիւններ կը ստանային։ Անոնցմէ մէկը՝ «Մամիկոնեանը», ունեցած է սպաներէն բաժին, միւսները՝ միայն Հայերէն։

#### Կուսակցութիւններ

ՀԵԴ կոմիտէն հիմնուեցաւ 1924ին՝ 6 անդամներով<sup>73</sup> (1930ին՝ 48 անդամ)։ Անոր առաջին կեդրոնատեղին դառնուած է Ռեփուզիթա Արիսնիթեան եւ Ջիլէ փողոցներու խաչմերուկին, Սերրո թաղամաս։ 1930ին հիմնուեցաւ Զափահատ Որբերու Միութեան մասնաճիւղ<sup>74</sup>։ ՉՈՄի կազմալուծումէն ետք, 1940ին Արսէն Միքայէլեան հիմնեց Արմենիա Երիտասարդաց Միութեան իրական եւ արական մասնաճիւղերը (1944ին՝ 150 անդամ<sup>75</sup>, իսկ 1949ին՝ 240<sup>76</sup>)։ 1934 Սեպտեմբերին ստեղծուեցաւ Հայ Օգնութեան Միութեան մասնաճիւղը (1943ին՝ 100 անդամ)<sup>77</sup>։

ՄԻՆ Կուսակցութեան Մոնիթինգի կոմիտէն Հիմնուեցաւ 1925-28ին: Առաջին կեդրոնատեղին գտնուած է Ռեպուպլիքա Արինթինա եւ Կրեմլի փողոցներու խաչմերուկին<sup>90</sup>: Ունեցած է մինչեւ 150 անդամ<sup>91</sup>: Որպէս Հնչակեան յարակից կազմակերպութիւններ, 1938ին Հիմնուեցան Հայ Ուսանողական Միութիւնը, որ Հինգ տարի ետք 30 անդամ ունէր, եւ աւելի ուշ՝ Երիտասարդական կազմակերպութիւն մը՝ Իդական (1939) եւ արական ճիւղերով (1942) (1943ին՝ 75 անդամ)<sup>92</sup>:

1929-1941ին Հայաստանի Օգնութեան Կոմիտէի «Շահումեան» մասնաճիւղը գոյութեան ունեցաւ<sup>93</sup>: Յառաջիմական Հոսանքը ներկայացնող Հայ Ազգային Կեդրոնը Հիմնուեցաւ 1935ին, իսկ իր Երիտասարդական ճիւղը՝ Երեւան Մշակութային Հիմնարկը՝ 1944ին<sup>94</sup>:

#### Այլք

1924ին, 14 անդամներով ծնունդ առաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնաճիւղը, որ Համայնքին մէջ տիրող պառակտումներու բերումով, երկու տարի ետք կազմալուծուեցաւ: Ան վերստին Հիմնուեցաւ 1938ին. 1943ին 81 անդամ ունէր: 1941ին սկիզբ առաւ Հայուհաց Բարեխրաց Միութիւնը, որ 1943ին 70 անդամ կը հաշուէր<sup>95</sup>:

Համայնքը բազմաթիւ Հայրենակցականներ ունեցաւ: Հնազանդները Սոսյ եւ Ֆնտրճագի Հայրենակցական Միութիւնները (1926) եղան<sup>96</sup>, որոնց յաջորդեցին Սեբաստիոյ եւ չրջակայք, Մարաշի, Հարունիէի (1927), Ատանայի (1928), Չէլթունի (1927)<sup>97</sup>, Հաճոյ, Կիւրինի, Ծոզկատի եւ չրջակայք (1930), Լափաշի (1931), Կեսարիոյ վերայինաց (1933), Ուրֆայի (1936) եւ Ամանոսի միութիւնները: 1943ին, ամէնէն բազմամարդը Մարաշինն էր՝ 130 անդամներով (800 Հոգիի վրայ)<sup>98</sup>: 1938ին յիշուած են նաեւ Այնթապի, Խաւնիի եւ Տէօրթ-Օոյի միութիւնները (որոնք 1943ի ցանկին մէջ չկան), եւ արուած է 17 միութեան թիւը<sup>99</sup>: 1947ին, 18 միութիւններ կային, Կէօքչէ-Կիւրի եւ Պրուսայի միութիւններու յաւելումով<sup>100</sup>:

#### ՄԱՄՈՒԼ

Ուրուկուայի մամուլը բացակայ է մամուլի ցուցակներէն, հակառակ անոր, որ Հոն յոյս տեսած է աւելի քան քսանեակ մը թերթի Կարապետ Հասասեան սկզբնապէս յիշած էր Արծիւ Հայաստանի պարբերաթերթը (1961) իբրեւ առաջին հրատարակութիւն<sup>101</sup>, իսկ այժմ առաջնութիւնը տուած է Մոնիթինգի պարբերականին<sup>102</sup>:

Պունտո Արժսի Արժսիներն պարբերաթերթի հրատարակիչ Սերգօ Գազազ 1931էն ետք հաստատուեցաւ Մոնիթինգի ու Հիմնեց առաջին Հայկական տպարանը՝ «Գազազեան» (Սան Մարթին 3280)<sup>103</sup>, ուր տպուե-

ցաւ Մոնթէջիտէօն: Թէեւ ըստ Հասասեանի, առաջին թիւը լոյս տեսած է Մայիս 1837ին<sup>107</sup>, իր թարգմանած կարգ մը բնագիրներ քաղուած են երրորդ թիւէն, որ 24 Ապրիլ 1837 թուագրուած է<sup>108</sup>: Վեցերորդ թիւը 31 Յուլիս 1837 թուագրուած է, ուստի ենթադրելի է, որ հազատ եւ անկաս առաջին հայաթերթն Մոնթէջիտէօն եղած է ամսաթերթ, եւ որ առաջին թիւը լոյս տեսած է Յունուար 1837ին: Տեւոդոսիւնը յայտնի է:

Մոնթէջիտէօնի Յուլիս 1837ի թիւը նաեւ կը պարունակէր Գալսերթ թերթին բաժանորդագրութեան ծանուցումը՝ առանձինն, կամ Մոնթէջիտէօնի հետ միասին: Ասիկա կը յուշէ, որ հրատարակիչը նոյնն էր. Գազազ կենարացի էր: Գալսերթի հրատարակութեան սկիզբը, տեւոդոսիւնն ու բովանդակութիւնը յայտնի չեն. ծանուցումին մէջ միայն ըսուած է, թէ կիսամսեայ է եւ շուտով պիտի դառնայ շաբաթաթերթ: Ենթադրած էինք, որ Գալսերթ կրնար հայրենակցական ըլլալ, դատելով անունէն<sup>109</sup>:

Սակայն, թրքական անունին գործածութիւնը աւելի հաւանական կը դարձնէ, որ թերթը թրքալեզու եղած ըլլալ, ինչ որ կը բացատրէ երկու թերթերուն հրատարակութիւնը եւ Գալսերթի աւելի յաճախակիութեան բնոյթը: Արդարեւ, Ուրուկուայի համայնքին կարեւոր մէկ մասը թրքախօս էր:

Յարդ ծանօթ երրորդ թերթը՝ Արեւելեան Առտը ամսաթերթը (աւետարանական), սկսաւ հրատարակուիլ Մարտ 1839ին, հայերէն եւ թրքերէն (հայաստ.)<sup>110</sup>: Խմբագիրը Յարութիւն Ահարոնեանն էր: Թերթը լոյս կը տեսնէր «Ջաքարեան» տպարանէն (Ատուրեղէս 815): Անոր տեւոդոսիւնը անյարտ է:

Արեւելեան Առտի (1839) եւ Արծիւ Հայաստանի միջեւ (1861), Հասասեան յիշած է Կեանքի Ճամբան անունով թերթ մը, անթուակիր<sup>111</sup>:

Վերջերս, Գարամանուկեան յաւելեալ տեղեկութիւններ հրատարակած է այս թերթին մասին, որ նոյնպէս աւետարանական թերթ մըն էր: Անոր առաջին թիւը լոյս տեսաւ Սեպտեմբեր 1948ին, խմբագրութեամբ Յարութիւն Ահարոնեանի, իբրեւ հրատարակութիւն Հայ Գրիտոնեայ Յրիտասարդաց Միութեան: Չորս տարուան ընդհատումէ հոգ, երկրորդ թիւը հրատարակուեցաւ Յունուար 1960ին, իսկ հինգերորդ թիւը՝ Ապրիլին<sup>112</sup>: Յարդ յայտնի վերջին թիւը՝ վեցերորդը, լոյս տեսաւ Մայիսին: Թերթը 8 էջ ունէր, հանդէսի չափով: 1948ի հասցէն Միւլտատ տէ լա Փաս 2243 (կամ 2943) էր, իսկ 1960ին՝ Կրեսիա 3354<sup>113</sup>:

Թերթերուն կարճատեւութիւնը աչքի զարնող հակադրութիւն մը կը ստեղծէ ռատիօկայաններու երկարակեցութեան հետ: Սփիւռքի որեւէ համայնքէ աւելի, Ուրուկուայի մամուլը եղած է դիտաւորաբար բանաւոր: 1886ին հիմնուած երկու ամէնօրեայ ռատիօփամբը ցարդ պահած են իրենց

գոյութիւնը, դառնալով Սփիւռքի ամենահինները, օրաթերթերու համագոր  
դեր մը խաղալով համայնքի կեանքին մէջ:

Առաջին *նաստիկայանը՝ «Ռատիօ Արմենիա»,* հիմնուեցաւ Յունիս 15, 1935ին, Յովհաննէս Աթէշեանի եւ Յարութիւն Ռուբէնեանի կողմէ: Վերջինս հնչական շարքային էր: Հիմնադրութեան թուականը զուգարդեպեցաւ Քասն կախադաններու 20րդ տարեկիցին<sup>214</sup>: Ռուբէնեան, որ այնուհետեւ վարիչը դարձաւ *նաստիկայանին*, 1957ին դնեց «Բնութեանտեսիս» *նաստիկայանը*, որ դարձաւ «Ռատիօ Արմենիա»-ի հանգրուանը մինչեւ այսօր<sup>215</sup>:

Որպէս հակազդեցութիւն, Օգոստոս 18, 1935ին, «Կոմիտաս» երգչախումբը ՀԾԴ-ի պօրակցութեամբ պիտի հիմնէր *նաստիօմամ մը՝ «Կոմիտաս»* անունով, որ 1987ին հաստատուեցաւ իր սեփական՝ «Բափիթար» *նաստիկայանին* մէջ:

Սրկու *նաստիկայաններուն* գաղափարական բնական հակադրութեանէն զատ, դիտել տանք, որ «Ռատիօ Արմենիա» իր հիմնադրութենէն մինչեւ 1960ականներ նաեւ սփռած է թրքական երաժշտութիւն<sup>216</sup>: Մինչ մէկ կողմէ այս երեսօթը բնական կը նկատուէր համայնքի ամբողջովին թրքախօս հասուածին, լիովին մերժելի էր միւս մասին համար: Վերջինիս ձայնակցելով, 1943ին Արծրունի կը դրէր, թէ «մեծ մասամբ ձայնասփուռ ժամերը կը ծառայեն իրենց բուն նպատակին, բայց դժբախտաբար կան եւ այնպիսիները, որոնք շարաշար կը շահագործեն երկրի ազատ օրէնքները եւ զանազան վէճերու առիթ կուտան ու թուրքերէն լեզուի եւ թրքական երգի ու նուագի պրոպագանդը կ'ընեն»<sup>217</sup>:

1950ին, Հարաւային Ամերիկայի Հալլապետական Պատուիրակ Գարեգին արք. Խաչատուրեան Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Զ-ին կը դրէր, թէ «այստեղ Հայ թերթեր չեն հրատարակուիր, բայց կան ձայնասփուռներ՝ որոնք անոյշ ձայնը չէ որ կ'արձակեն: Երևարար քիչ բան ունին երբ խօսքը դադրի եւ երգը միայն հնչէ: Սրգերուն այ մերթ կը խառնուին թրքերէններ՝ որոնք սիրտ եւ խիղճ կը պղտորեն: Յորդորներ լսելի չեն ըլլար: Արժ մի քիչ մեղմացած եւ բարեփոխուած է»<sup>218</sup>:

1938ին, այս երկու *նաստիօմամերէն* զատ գոյութիւն ունէին յառաջդիմական «Cultura Armenia» (Հայ Մշակոյթ) եւ Մարաշի Հայրենակցական Միութեան «La Voz Armenia» (Հայ Ձայնը) *նաստիօմամերը*<sup>219</sup>: 1943ին, վերջին երկուքին փոխարէն գոյութիւն ունէին հնչական «Հայ Գաղութի Ձայնը», որ «Հայ Ձայն»-ի շարունակութիւնն էր, եւ ուրիշ մը, որ թրքական երաժշտութիւն կը սփռէր եւ այդ պատճառով անունով լիւրտած չէ Արծրունիի կողմէ<sup>220</sup>: 1947ին միայն «Ռատիօ Արմենիա»-ն (շարաթական 4 անգամ, 8 ժամ) եւ «Կոմիտաս»-ը (շարաթական 1 անգամ, 1 ժամ) գոյութիւն ունէին<sup>221</sup>:

ՄԱՆՈՔԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- <sup>1</sup> Տնօ մեր գրախոսականը՝ Պատմա-Բանասիրական Հանդես, 1, 1907, էջ 293-296.
- <sup>2</sup> Անչուլա եթէ նկատի չունենանք ժամույն արիւնային սկզբնաղբիւրի դերը.
- <sup>3</sup> Buenos Aires y Córdoba en 1729 según cartas de los padres C. Cattáneo y C. Gervasio S.J., Պունենո Ալբէս, 1941, էջ 62 (անդգծուած մերն է):
- <sup>4</sup> Daniel Karamanoukian y Alberto Douradjian, *La inmigración armenia en el Uruguay*, vol. I, Մոնթեվիդէո, 1963, էջ 70: Հեղինակները կու տան Azarian տարրնիցը, բայց պատճենը (էջ 77) յստակօրէն Azarian կըսէ (անմտ.՝ Վարդան Մարմէտեան, Վերաբեր Արժանիքի Հայ Գաղութի Պատմութեան, Բարեբեր Յրեւանի Համալսարանի, 1, 1906, էջ 100): Իսկ սեփականատէրերու տոմարը Belingian եւ Belindian որոշ մեկերը ունի, առաջինը՝ երկու, երկրորդը՝ մէկ անգամ (Karamanoukian y Douradjian, *La inmigración*, էջ 70):
- <sup>5</sup> Robert Mirak, *Torn Between Two Lands. Armenians in America 1890 to World War I*, Պունենո, 1983, էջ 40-42.
- <sup>6</sup> Եղնիկ ԳՇԻ՝ Վարդանեան, *Պրայնիսի Հայ Գաղութը*, Պունենո Ալբէս, 1948, էջ 36.
- <sup>7</sup> Մամուկի Փրմոյան, «Հայերը Հարաւային Ամերիկայում», *Նորք*, 3, 1991, էջ 142.
- <sup>8</sup> Վարդանեան, *Պրայնիսի*, էջ 36-37.
- <sup>9</sup> Douradjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 80.
- <sup>10</sup> «Հայեր ի Հարաւային Ամերիկայ», *Արմէնիա*, 2 Մարտ 1889, էջ 2.
- <sup>11</sup> Միմարեան, «Ճամակ Հարաւային Ամերիկայէն», *Արմէնիա*, 10 Ապրիլ 1890, էջ 2.
- <sup>12</sup> Ազոտ Արեւրուսի, *Տարեցոյց Հայր-Ամերիկահայոց*, Պունենո Ալբէս, 1943, էջ 266.
- <sup>13</sup> Douradjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 80-81.
- <sup>14</sup> Luis Seguí González y Alejandro Rovira, *Contribución al estudio del derecho migratorio uruguayo*, Մոնթեվիդէո, 1939, էջ 80.
- <sup>15</sup> Ignacio Klich, "Les sources concernant les libanais et autres Moyen-Orientaux en Argentine", *մե՛ն՝ Michel Nancy et Elisabeth Picard (eds.), Les Arabes du Levant en Argentine*, Էջա-Ան-Փրովանս, 1998, էջ 111.
- <sup>16</sup> *Մէջբերումը տե՛ն՝ Carlos Zubillaga, La utopía cosmopolita. Tres perspectivas históricas de la inmigración masiva en el Uruguay*, Մոնթեվիդէո, 1990, էջ 80.
- <sup>17</sup> Seguí González y Rovira, *Contribución*, էջ 80: Այս որոշումագիրը ամբողջութեամբ Մեյ-անմբեր 1932ի հրովարտակով, որուն 18րդ թղթուսին 11րդ պարբերութիւնը կը կրկնէր անդալիներու եւ արբիկեղնիներու մասին հաստատումը (*idem*, էջ 392):
- <sup>18</sup> Douradjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 85-86.
- <sup>19</sup> Արեւրուսի, *Տարեցոյց*, էջ 266: Բողոքը՝ Հիւսանի պիղումը, թէ՛ 1890ին եւ 1900ին հասած առաջին հայերը Ազարեան եւ Մըլիկեանի կայք չեն հաստատած (Robert Hewsen, *Armenia. A Historical Atlas*, Երեւան, 2001, էջ 274) անհիմն է: Իր հաստատման արբերը՝ Carlos Hassessian, "The Armenian Community in Uruguay", *Ararat*, Autumn 1984, էջ 73) այս տուեալը չունի:
- <sup>20</sup> Douradjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 87, 171-172: Այս ցանկէն մէկ հոգի (Simon Maian) կասկածելի է: 1904ին առաջին անգամ 7 հոգի մտց (հայր, մայր եւ 5 զարակ) Սիւնի մակամուսնով ընտանիք մը ժամանեց:
- <sup>21</sup> Նոյն, էջ 88.

- <sup>22</sup> Բաճաւոր վկայութիւն՝ Օֆելիա Բաղլաբեանի (1994), տեղեկութիւնը համալրած է Տանիէ Գարամանուկեանը
- <sup>23</sup> Տեոր Արմաւազրուիեանց Հայ Բարեգործական Ընկերութեան Արժէքիքի Հայաց (ՀԲԸՄ), 12 հ. 27 Մայիս, 1915:
- <sup>24</sup> Հժժու.՝ Daniel Karamanoukian, *El Genocidio Armenio en la prensa del Uruguay. Año 1915*, Մոնթեվիդէօ, 1988, էջ 84:
- <sup>25</sup> Այս եւ յիշուց սպաներէն նամակն ընդգրկեալութիւնները տես՝ ՀԲԸՄի նամակներու Տոմար, Պուստոս Ալքէսի մասանելոյ, Յունիս 10, 1915:
- <sup>26</sup> Karamanoukian, *El Genocidio Armenio*, էջ 100-101:
- <sup>27</sup> նամակներու Տոմար, նամակ Արամ Դուկասեանին, 10 Հոկտեմբեր, 1915:
- <sup>28</sup> Եւ յի, նամակ Յարութիւն Ձիլիկերեանին, 17 Հոկտեմբեր, 1915:
- <sup>29</sup> Տեոր, 6 Եպիմերք 1915:
- <sup>30</sup> Karamanoukian, *El Genocidio Armenio*, էջ 110-111:
- <sup>31</sup> Տեոր, 6 Փետրուար 1915:
- <sup>32</sup> Daniel Karamanoukian, "Apuntes para una reconstrucción histórica de la conmemoración del 24 de Abril en Uruguay", *Hay Endanik*, abril de 1999, էջ 37:
- <sup>33</sup> Արծրունի, *Տարեցոյց*, էջ 266: Կամաւորներուն տնուները քացակայ են Ուրուկուայի մուտքի ստմարներէն:
- <sup>34</sup> Karamanoukian, "Apuntes", էջ 38:
- <sup>35</sup> նամակն պատեճը տես՝ նամակներու Տոմար:
- <sup>36</sup> Տեոր, 2 Հոկտեմբեր 1915:
- <sup>37</sup> Հայ Գաղթականութիւն, *Յոյնաք*, 24 Յունիս 1920, էջ 968:
- <sup>38</sup> Ashot Artzruni, *Historia del pueblo armenio*, Պուստոս Ալքէս, 1971, էջ 408:
- <sup>39</sup> Արսէն Կիսուր, *Պատմութիւն Ս. Դ. Հելլական Կուսակցութեան (1887-1903)*, Բ. Հատոր, Պէքրուսի, 1983, էջ 246:
- <sup>40</sup> Richard Hovannisian, *The Republic of Armenia, vol. III: From London to Sevres, February-August 1920*, Պիքզի-Լտտան, 1996, էջ 433:
- <sup>41</sup> Richard Hovannisian, "The Republic of Armenia", տես Richard Hovannisian (ed.), *The Armenian People from Ancient to Modern Times*, vol. II, Երև. Երթ, 1997, էջ 383:
- <sup>42</sup> Hovannisian, *The Republic*, էջ 433:
- <sup>43</sup> Douredjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 65:
- <sup>44</sup> Արզան Մատթէանեան, «Հայաստանի Հանրապետութիւնը Եւ Հարաւային Ամերիկայի Պետութիւնները (1918-1920)», *Հայկազեան Հայագիտական Հանդէս*, Կ. ժ.Թ., 1998, էջ 249-262:
- <sup>45</sup> Ս. Կոսեան, «Պատմական վտանգները», *Արժէքեր*, 18 Յունուար 1966, էջ 2:
- <sup>46</sup> Hovannisian, *The Republic*, էջ 434:
- <sup>47</sup> Թիֆլիսեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, 1908-1921, Հատոր Ա., Փարիզ, 1986, էջ 410: Նարսիսա Գինայեան՝ Ձիլիկերեանին կը վերադրէ 1910-1923 թուականներու տաննապետութիւնը (Narciso Binayan Carmona, *Entre el pasado y el futuro: los armenios en la Argentina*, Պուստոս Ալքէս, 1988, էջ 107):
- <sup>48</sup> Արծրունի, *Տարեցոյց*, էջ 266: Տես՝ Արծնիկեանեան Մամուլ, 2 Դեկտեմբեր 1923, էջ 2:
- <sup>49</sup> Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 108:

- <sup>29</sup> Douredjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 88. 1925-1929ին, նորիկորէն 980 հազի Գաղթականաց Գանդոկին մէջ Հիւրընկալուած են՝ մինչև տեղաւորուիլը (Zubillaga, *La utopia cosmopolita*, էջ 40):
- <sup>30</sup> Նուպար Աւարոնեան, «Ուրուկուայի Հայ Գաղութի Մարզահամարը», *Արմէնիա*, 7 Մայիս 1932, էջ 2:
- <sup>31</sup> «Հայ Գաղթականութիւն», *Հայաստանի Վոչեպի*, 22 Օգոստոս 1926, էջ 1071:
- <sup>32</sup> Douredjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 96:
- <sup>33</sup> *Idem*, էջ 114:
- <sup>34</sup> «Հայերը Ուրուկուայի Մէջ», *Հայաստանի Վոչեպի*, 28 Փետրուար 1926, էջ 360:
- <sup>35</sup> Մէլերուսու մե՛ս՝ Douredjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 83. Տօղերս զբողին մե՛ս հայր՝ Թարութիւն Մասնիկուան, որ Պէլլուիքն առանձինն ժամանած էր Մոնթեփլիտէն 1928ին (1930ին իրեն պիտի հետեւէին կի՛նն ու նրեքամիայ աւազ որդին՝ Զուհարը), իշտուկի պատճառով ստիպուած էր հրաժարիլ Պուենոս Այրէս Հաստատուելու իր ժողովութիւնէն:
- <sup>37</sup> Արմանագրութեան Տոմար Հայ Գաղութային Կեդրոնի, Մայիս 9, 1923:
- <sup>38</sup> «Հարաւ Ամերիկայ Գաղտը Հայերու Ուշադրութեան», *Առեւ*, 27 Փետրուար 1924, էջ 2; «Ազգային Կեանք», *Հայաստանի Վոչեպի*, 5 Ապրիլ 1924, էջ 440. Հիւզ Նոյեմբեր 1922ին Պուենոս Այրէսի Գաղութային Կեդրոնի օժանդակութիւնը ինքզան էր, նշելով, որ խնդրոյ աւարկայ անձին՝ Տրակոն Կըլընեան, «Տիլէ անցնելու կարող ըլլալու համար Մոնթեփլիտէոյի կառավարութիւնը նրախաւորութիւն կը պահանջէ եղեր» (Արմանագրութեան Տոմար, 28 Նոյեմբեր 1922). հարցը հարմուեցաւ Յունուարին:
- <sup>39</sup> Տէն Ապրիլ, 10, 1988, էջ 13. Կոստանեան շիւուած է որպէս 1926-1980 չրանի ատենապետ (Binyan Carmona, *Entre el pasado*, էջ 106):
- <sup>40</sup> Գ. Վարդեան, «Հետաւոր գաղութներ», *Հայրենիք*, 24 Յունուար 1929, էջ 2. Ըստ ուրիշ թղթակիցի մը, Միութիւնը կազմուած էր «շնորհիւ Հայքենակցական Միութիւններու իրարահակադրութեան» (Յ. Ա., «Ազգային Միութիւնը Մոնթեփլիտէոյի մէջ», *Հայրենիք*, 9 Մարտ 1929, էջ 2):
- <sup>41</sup> Douredjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 63-64:
- <sup>42</sup> Պուենոս Այրէսի ՀՕԿի վիճակագրութիւնը (Մայիս 20, 1928ի նամակ, ուղղուած՝ Օրեւանի Կեդրոնական Կարգութեան տե՛ս՝ Հայաստանի Հանրապետութեան Նորագոյն Պատմութեան Պետական Կեդրոնական Արխիւ, ֆ. 178, ց. 1, գ. 464); Յովհաննէս քենյ Ամիրանց, «Հարաւ Ամերիկայի Հայ Գաղութը», *Լեռնաբնակ Տարեցոյց Արց. Հեռակառնայի Պայիս*, 1929, էջ 290; Տիգրան Աւագեան, «Մոնթեփլիտէոյի Հայ Գաղութը», *Արմէնիա*, 15 Մայիս 1936, էջ 2; «Հայերու Թիւը», *Հայրենիք Տարեցոյց*, Պոստը, 1944, էջ 239; «Տեսակցութիւն Մը Ուրուկուայի Պատգամաւոր Տուրք՝ Միլտիլ Տէր Թակոբեանի Հետ», *Հրօրիք*, 29 Մայիս 1947, էջ 1. 1943ին, Աշտա Արմուրի կու տար 6.000ի թիւը (Արմուրի, *Տարեցոյց*, էջ 264). Ըստ Տիգրէնեանի ու Գարամանուկեանի հաշուարկին, 1946ին հայերու թիւը 7.850 էր (Douredjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 146):
- <sup>43</sup> Տէն՝ Alberto Douredjian, «Instituciones armenias en el Uruguay. Los orígenes», *Segundas Jornadas Internacionales de Estudio de las Comunidades Armenias de América del Sur, Montevideo*, 27-30 Մեյսնոյեր 1981, էջ 14 անտիպ գիւղութուը:
- <sup>44</sup> «Բաւանայ Կուզուիչ», *Յուսար*, 24 Յունիս 1931, էջ 3:
- <sup>45</sup> Արմուրի, *Տարեցոյց*, էջ 265, 267:
- <sup>46</sup> Karamanoukian, «Apuntes», էջ 39-40, 54:

- <sup>67</sup> Արժանազրույթի մասին Տնտեսական Հայ Գաղութային Կեդրոնի, Յուլիս 20, 1980.
- <sup>68</sup> Ահարոնյան, «Ուրուկուայի Հայ Գաղութի», էջ 2.
- <sup>69</sup> Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 106.
- <sup>70</sup> ՏՆՍ՝ «Յայտարարություն», 17 Յունիս 1935 (Գուենոս Այրեսի Հայաստանաց Առաքելական Եկեղեցու Հղարարությունից արխիվ, Correspondencia, 1925-1950).
- <sup>71</sup> *Տարբերք*, 7 Մայիս 1938, էջ 2.
- <sup>72</sup> Արժույթի, *Տարբերք*, էջ 287-290. «Միլիտարացի», Հայաստանի Կոչմա, Փետրուար 1957, էջ 65.
- <sup>73</sup> Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 108. Եկեղեցույց արան շինությունից ի նպաստ Հանրահանությունից մը կույ՛ր 1944ին, ստորագրուած էր Գ. Պերկուայի կողմէ (Ենոյ Մանթէֆրոնտի Հայ Հասարակությունից, Արժեքից, 21 Մարտ 1944, էջ 3).
- <sup>74</sup> Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 108.
- <sup>75</sup> Արժույթի, *Տարբերք*, էջ 289.
- <sup>76</sup> Douredjian, "Instituciones", էջ 14.
- <sup>77</sup> Douredjian y Karamanoukian, *La inmigración*, էջ 266.
- <sup>78</sup> ՏՆՍ՝ Pascual Tekeyan, *Memorias*, Գուենոս Այրես, 1938, էջ 297-299.
- <sup>79</sup> Douredjian, "Instituciones", էջ 16.
- <sup>80</sup> Քոչմա, «Եկեղեցական Կեանք», Հայաստանի Կոչմա, 20 Փետրուար 1930, էջ 211.
- <sup>81</sup> Հարաւ Ամերիկայի Հարիւր (չրիւն քարտիչի մը վաւերական տեղեկութիւնները), *Յառաջ*, 11 Յուլիս 1930, էջ 2; Արժույթի, *Տարբերք*, էջ 306.
- <sup>82</sup> Alberto Douredjian, "La educación armenia en el Uruguay", *Segundas Jornadas Internacionales de Estudio de las Comunidades Armenias de América del Sur*, Գորտուպա, 27-30 Սեպտեմբեր, 1991, էջ 1 (անտիպ զեկուցում).
- <sup>83</sup> Աւագան, «Մանթէֆրոնտից», էջ 2; Հրանդ Գանգրուի, *Յանուն Հայրենիքի*, Պէլլուրի, 1990, էջ 159.
- <sup>84</sup> Արժույթի, *Տարբերք*, էջ 270.
- <sup>85</sup> Անդ. Մանթանոսան Հայկական Վարժարանի Հղարարությունից, «Մանթանոսան» Վարժարանի Բացման Հանդէսը, *Շրթաթ*, 11 Մայիս 1935, էջ 2.
- <sup>86</sup> Կոչմա [Նշան Գոստանան], «Մանթէֆրոնտի Հայ Գաղութը», Արժեքից, 26 Փետրուար 1940, էջ 2.
- <sup>87</sup> Տիգրան Աւագան, «Ուրուկուայի Գաղութը», Արժեքից, 16 Մարտ 1956, էջ 2. Յարուհազն, ոչ-դաշնակցական դպրոցի մը մասին է խոսքը, որուն անունը չենք կրցած պարզի ցարդ.
- <sup>88</sup> Է. Յ. Դաշնակցութիւնը Ուրուկուայի մէջ, Արժեքից, 10 Մարտ 1970, էջ 1.
- <sup>89</sup> Douredjian, "Instituciones", էջ 8, 10.
- <sup>90</sup> Արժույթի, *Տարբերք*, էջ 286-288; Մասիս, «Ուրուկուայի Կեանք», Արժեքից, 16 Դեկտեմբեր 1944, էջ 2.
- <sup>91</sup> Կոչմա, «Մանթէֆրոնտի Հայ Գաղութը», Արժեքից, 26 Փետրուար 1940, էջ 2.
- <sup>92</sup> Արժույթի, *Տարբերք*, էջ 272-276. Douredjian, "Instituciones", էջ 9.
- <sup>93</sup> Կոչմա, էջ 8.
- <sup>94</sup> Գանգրուի, *Յանուն*, էջ 158.
- <sup>95</sup> Արժույթի, *Տարբերք*, էջ 280.

<sup>94</sup> Հիմնադրութեան ժամին, տե՛ս՝ Հայաստանի Հանրապետութեան Կրթութեան Գաղտնի-  
 քան Կեդրոնական Գեոսոցիալ Արխիւ, Փոստ 178, ցուցակ 1, գործ. 486.

<sup>95</sup> Douredjian, "Instituciones", էջ 11.

<sup>96</sup> Ռոմանոսեան, էջ 410; Արծրունի, *Տարեցույց*, էջ 283-286.

<sup>97</sup> Douredjian, "Instituciones", էջ 7.

<sup>98</sup> Քուսկանը տե՛ս՝ Զեյթունի Հայրենակցական Միութեան Վարչութիւն, *Արեւիկայի* շրջանի  
 Զեյթունի Հայր. Միութեան Հիմնումը Եւ Վարչութիւններու Գործերը, *Արեւիկայ*, 1  
 Յունիս 1967, էջ 2.

<sup>99</sup> Արծրունի, *Տարեցույց*, էջ 295-303, որ կը ձիշ անդամներու թիւերը եւ սուսայ քաղաքի  
 թիվներու ընդհանուր թիւը.

<sup>100</sup> Տ.Մ. [Տանտա Միւթէ՛վէլեան], *Արեւիկայի Հայ Կեանքին, Տարեւում*, 6 Յունուար  
 1938, էջ 2.

<sup>101</sup> «Տեանկցութիւն Մը Ուրուկուային», էջ 1.

<sup>102</sup> Narciso Binayan, *La colectividad armenia en la Argentina*, Գուենո Արչէս, 1974, էջ 108.  
 Արտաշէս Տէր Խաչատուրեան (*Հայ Մամուլի Ցուցակ*, Լուս Աննիլլոս, 1987, էջ 46) *Արծր-  
 խաչատուրեանի* դր.թ.թիւերը 1946ին կամ 1947ին կը ղիշ, որ ճիշդ 15. Մանուէլ Բարչոյեան  
 (*Հայ Մամուլի Համահասար. Ցուցակ*, Երեւան, 1988, էջ 264) կը ձիշ պարբերութիւնը որ-  
 ւիս արժանիքնա՛ւայ, որովհետեւ Գուենո Արչէս տպուած էր.

<sup>103</sup> Carlos Hassassian, "Panorama de la prensa gráfica armenia en Argentina y Uruguay",  
 տե՛ս՝ Vartan Matiossian (ed.), *Los armenios en América del Sur*, Գուենո Արչէս, 1982, էջ  
 112. Հմտ.՝ Binayan Carmona, *Entre el pasado*, p. 278.

<sup>104</sup> Karamanukian y Douredjian, *La inmigración*, էջ 132.

<sup>105</sup> Hassassian, "Panorama", էջ 112.

<sup>106</sup> Տե՛ս՝ Karamanukian y Douredjian, *La inmigración*, էջ 136.

<sup>107</sup> Քոչմակից, «Ուրուկուէյ. Առաջին Հայ Գարբերակները», *Ժամագր.* 30 Մարտ 1988, էջ 3.

<sup>108</sup> Հմտ.՝ Hassassian, "Panorama", էջ 112, որ ինչ կերպիւմ լեզուի Պիտայեան (Binayan  
 Carmona, *Entre el pasado*, էջ 278) *Արեւիկայի Առաջը սխալմամբ կը թուարկէ* 1938.

<sup>109</sup> Հմտ.՝ Hassassian, "Panorama", էջ 112.

<sup>110</sup> Karamanukian, "Apuntes", էջ 42.

<sup>111</sup> Տանիէլ Գարամանուկեան, անձնական իմայ (e-mail), 16 Յունիս 1999.

<sup>112</sup> Karamanukian, "Apuntes", էջ 64.

<sup>113</sup> Binayan Carmona, *Entre el pasado*, էջ 280, որ Հիմնադրութիւնը Հնչակեան Ուսանող-  
 ական Միութեան վերապրած է. Արիկա անճիշդ է. քանի որ Միութիւնը Հիմնուած է  
 1930/45.

<sup>114</sup> Տղերս քրտիշ Նոր՝ Զուրապ Մամիկոնեանի անձնական վկայութեամբ (*Գաղտնի աշ-  
 խատակեց*՝ 1940-1967, վարիշ՝ 1967-1974), Աննիլլոս Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Ման-  
 քի՛վիւն իր առաջին աշխատութեան (1990) համոզած է Ռուբէնեանը, որ Բրզգական երա-  
 ժտութեան սփռումները դադարեցնէ. Ըստ Գարամանուկեանի, դադարեցումը տեղի ու-  
 նեցած է 1964ի շուրջ (Karamanukian, "Apuntes", էջ 64).

<sup>115</sup> Արծրունի, *Տարեցույց*, էջ 276.

<sup>116</sup> *Հանրապետիկ Հայ Երեւանու Գաղտնիքներ (1939-1966 թթ.)*, դիրք 2, Գեորգ Զ. Զարեք-  
 չեան, Կաթողիկոս Աննիլլոս Հայոց, կազմող՝ Սանդրո Բեհրուզեան, Վոսկան Երեւանցի  
 Հրատարակչութիւն, Երեւան, 1990, էջ 803.

<sup>119</sup> Շառաւայի Գաղութը, Արմենիա, 10 Յունիս 1888, էջ 8

<sup>120</sup> Արմենի, Տարիցք, էջ 270.

<sup>121</sup> «Տեսակցութիւն ըն Ուրուգուային», էջ 1.

THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY  
(FROM ITS BEGINNINGS TO 1950)  
(Summary)

VARTAN MATIOSSIAN

The Armenian community of Uruguay has been little studied. With the exception of Ashot Artzruni's yearbook devoted to the Armenians of South America (1943, in Armenian) and the pioneering, scholarly book of Alberto Douredjian and Daniel Karamanoukian (vol. I, 1993, in Spanish), research on the subject is still lacking.

The author has brought together a collection of hitherto untapped primary and secondary sources in this article to give an overall picture of the history of the community until 1950.

Although some Armenian names were recorded in the early 19th century, the first references to the arrival of immigrants in this South American country are from the second half of that century. Attempts at organization are recorded in 1890 and the 1910s. The big migratory wave from 1923-1931 gave the community its definitive shape and the momentum for its institutional organization. In this period the Armenian Apostolic Church and the Diocesan Council, political parties, compatriotic unions, schools, and other organizations were founded. The consolidation of institutions continued in the mid-thirties although the community underwent a serious split in the Apostolic Church (1935-1939), which, however, was overcome through the intervention of the newly-appointed Patriarchal Legate for the Armenians of South America, Abp. Karekin Khatchadourian. It was also in the 1930s that two radio hours, "Armenia" and "Gomidas," were founded (1935); they are the oldest radio programs in the Diaspora to this day. By 1946 the community of 6,000-7,000 had already reached economic and social integration in the Uruguayan society.